ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Այս երկրի ափերը ողողում են Խաղաղ օվկիանոսի արևմտյան ծովերի ջրերը, տարածքով այն Ասիայի ամենամեծ երկիրն է, իսկ աշխարհում գրավում է երրորդ տեղը:Տարածքը կազմում է 9.6 մլն կմ ²:

1) Չինաստան
2) Հնդկաստան
3) Ռուսաստան
4) Ղազախստան

2 **Տրվածներից ո՞ր մշակաբույսի պահանջն է Ճապոնիան ամբողջությամբ լրացնում իր գյուղատնտեսության շնորհիվ:**

1) թեյ
2) բրինձ
3) արմավ
4) շաքարակիրներ

3 **Ծովի մակարդակի համեմատ, իր միջին բարձրությամբ Աֆրիկան զիջում է միայն.**

1) Անտարկտիդային և Եվրասիային
2) Ավստրալիային և Հվ.Ամերիկային
3) Հս Ամերիկային և Եվրասիային
4) Հս. Ամերիկային և Հվ. Ամերիկային

4 **Վաղինները չոր գետահուներ են, որոնք հանդիպում են.**

1) Անտարկտիդայում
2) Եվրասիայում
3) Ավստրալիայում
4) Աֆրիկայում

5 **Տրված լեռնային համակարգերից ո՞րը *չի* գտնվում Ասիայում:**

1) Կարակորումի
2) Հինդիկուշի
3) Տիբեթի
4) Ատլասի

6 **Պետություն-մայրաքաղաք զույգերից ո՞րը Հարավային Եվրոպայում *չէ:***

1) Իսպանիա – Մադրիդ
2) Հունաստան – Աթենք
3) Իտալիա – Հռոմ
4) Ֆրանսիա – Փարիզ

7 **Տրվածներից ո՞ր երկիրը *չունի* 100 միլիոնից ավել բնակչություն:**

1) Պակիստան
2) Ինդոնեզիա
3) Բանգլադեշ
4) Իսրայել

8 **Նշվածներից ո՞ր երկրի տարածքով է հոսում Դանուբ գետը:**

1) Ֆրանսիա
2) Իսպանիա
3) Իտալիա
4) Գերմանիա

9 **Տրված երևույթներից որում է խախտված *պատճառ-անմիջական հետևանք* կապը:**

1) Ստորջրյա երկրաշարժ – ցունամի
2) Մշտական քամիներ – օվկիանոսային հոսանքներ
3) Գրավիտացիա – մակընթացություն և տեղատվություն
4) Տեկտոնական սալերի տեղաշարժ – կլիմայի գլոբալ փոփոխություն

10 **Ներքնոլորտի ստորին շերտի ֆիզիկական վիճակը տվյալ պահին, որոշակի տարածքի վրա, կոչվում է.**

1) կլիմա
2) եղանակ
3) կլիմագրամ
4) քամիների վարդ

11 **Բնական զոնա – հողային տիպ – բուսական աշխարհ բնության բաղադրիչների զուգորդումներից որում կա *սխալ:***

1) Տունդրա – տորֆաճահճային հողեր – մամուռներ
2) Տայգա – պոդզոլային հողեր – փշատերև ծառեր
3) Սավաններ – կարմրահողեր – բաոբաբ
4) Անապատներ – կարմրադեղնավուն հողեր – ֆիկուսներ

12 **Ո՞ր լեռներն են հանդիսանում բնական սահման Ֆրանսիայի և Իսպանիայի միջև:**

1) Ալպեր
2) Պիրենեյան
3) Ատլասի
4) Շվարցվալդի

13 **Նշվածներից ո՞րը տարածքի մեծությամբ գերխոշոր երկրների խմբի մեջ չի մտնում:**

1) Ավստրալիա
2) Չինաստան
3) Կանադա
4) Հնդկաստան

14 **Նշվածներից ո՞րն է բացարձակ միապետություն:**

1) Օման
2) Նիդեռլանդներ
3) Նորվեգիա
4) Մեծ Բրիտանիա

15 **Նշվածներից ո՞րն է ունիտար երկիր՝ վարչատարածքային կառուցվածքով:**

1) Կանադա
2) Հնդկաստան
3) Գերմանիա
4) Ֆրանսիա

16 **Ինչպե՞ս է կոչվում որևէ փոքր տարածքի մանրամասն պատկերը հարթության վրա՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով:**

1) քարտեզ
2) մասշտաբ
3) ազիմուտ
4) հատակագիծ

17 **Քարտեզների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Որքան փոքր է մասշտաբի հայտարարը, այնքան խոշորամասշտաբ է քարտեզը:
2) Քարտեզները ընդգրկելով մեծ տարածքներ, պարունակում են շատ մանրամասներ:
3) Գունդը հարթության վրա պատկերելիս չեն առաջանում աղավաղումներ և ստացվում են գերճշգրիտ քարտեզներ:
4) Ընդհանուր աշխարհագրական քարտեզների վրա պատկերվում են միայն բնական բաղադրիչները:

18 **Նշվածներից ո՞րը եղանակաստեղծ տարր *չի* համարվում:**

1) մթնոլորտի ճնշումը
2) մթնոլորտի խոնավությունը
3) մթնոլորտի ջերմաստիճանը
4) մթնոլորտի թափանցիկությունը

19 **Տրվածներից ո՞րը *չի* համարվում բնատարածքային համալիրների բաղադրիչ:**

1) լեռնային ապարները
2) բույսերն ու կենդանիները
3) ազգերի էթնիկական կազմը
4) ջրագրական ռեժիմը

20 **Տրված երկրներից ո՞րը ունիտար *չի*:**

1) Իրան
2) Թուրքիա
3) Ֆրանսիա
4) Հնդկաստան

21 **Բնակչության ծնելիության կարգավորմանն ուղղված միջոցառումների՝ վարչական, տնտեսական,քարոզչական և այլն, համակարգը, որի միջոցով պետությունը ձգտում է կարգավորել ծնելիությունը նպատակահարմար ձևով, կոչվում է.**

1) ժողովրդագրական քաղաքականություն
2) ժողովրդագրական պայթյուն
3) ժողովրդագրական ճգնաժամ
4) ժողովրդագրական իրադրություն

22 **Ըստ մարդաշատության, ո՞ր խմբի մեջ են մտնում 500 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքները:**

1) մեծ
2) փոքր
3) խոշոր
4) խոշորագույն

23 **Ո՞ր երկրի սեռատարիքային բուրգն է պատկերված նկար 1-ում:**

1) Իտալիա
2) Ճապոնիա
3) Հնդկաստան
4) Մեծ Բրիտանիա



Նկար 1

24 **Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Տնտեսական հարաբերությունների ամենահին և ամենատարածված ձևը միջազգային առևտուրն է:
2) Առևտրային հաշվեկշիռը երկիր արտահանված և ներկրված ապրանքների և ծառայությունների արժեքային արտահայտության հարաբերությունն է:
3) Միջազգային զբոսաշրջությունն ու տեղեկատվության փոխանակումը ծառայությունների միջազգային առևտրի ձևերից են:
4) Ապրանքների արտահանման և ներմուծման չափերով առաջատար երկրներից են Չինաստանը, ԱՄՆ-ն, Գերմանիան:



Քարտեզ 1

25 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Կարակաս մայրաքաղաքը:**

1) Ե
2) Զ
3) Է
4) Ը

26 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր ծովային հոսանքն է նշված Ա տառով:**

1) Կալիֆոռնիական
2) Պերուական
3) Ֆոլկլենդյան
4) Բենգելյան

27 **Տրված պետություններրից ո՞րը ներկայումս չի գտնվում ԱՊՀ կազմում:**

1) Հայաստան
2) Վրաստան
3) Ղազախստան
4) Ուզբեկստան

28 **Տրվածներից ո՞րը բարձր զարգացած երկրների առաջին ենթատիպում գտնվող երկիր *չէ:***

1) Գերմանիան
2) Ֆրանսիան
3) Իսպանիան
4) Իտալիան

29 **Քարտեզի վրա միատեսակ մթնոլորտային ճնշում ունեցող, փակ, կոր գծերը կոչվում են.**

1) իզոթերմեր
2) իզոբարեր
3) իզոհիետներ
4) իզոկոլներ

30 **Ըստ պետությունների կառավարման այս ձևի, իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար և պետությունը կառավարվում է միապետի՝ թագավորի, կայսրի, սուլթանի և այլոց կողմից:**

1) բացարձակ միապետություն
2) նախագահական հանրապետություն
3) համադաշնություն
4) խորհրդարանական հանրապետություն

31 **Երկրագնդի վրա բնակչության անհավասարաչափ տեղաբաշխման վրա ազդող բնական գործոններից *չէ:***

1) ռելիեֆը
2) ջրագրական ցանցը
3) հողակլիմայական պայմանները
4) արտադրության զարգացման մակարդակը

32 **Ինչպե՞ս են կոչվում որևէ երկրի 15-65 տարեկան բնակչությունը, որոնք իրենց ֆիզիկական զարգացմամբ, անհրաժեշտ գիտելիքներով, փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ ճյուղում:**

1) աշխատանքային ռեսուրսներ
2) բնակչության վերարտադրություն
3) բնակչության տարիքային կազմ
4) տնտեսապես ակտիվ բնակչություն

33 **Ընտրել ճիշտ պնդումը:**

1) Խոշոր քաղաքների արվարձանների սրընթաց աճի երևույթն անվանում են սուպերուրբանացում:
2) ԱՄՆ-ում ձևավորված խոշոր մեգալոպոլիսներն են Բոսվաշը, Չիփիթսը և Սան-Սանը:
3) Քաղաքային բնակչության բաժնի ավելացման, քաղաքների դերի բարձրացման և քաղաքային ապրելակերպի տարածման պատմական գործընթացը կոչվում է տարաբնակեցում:
4) Զարգացած երկրներին բնորոշ է «կեղծ ուրբանացումը»:

34 **Բնական ռեսուրսների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Վառելիքային օգտակար հանածոներն ունեն նստվածքային ծագում:
2) Աշխարհում պղնձի տարածման խոշորագույն շրջաններից է Անդյան լեռնային համակարգը:
3) Աշխարհի բոլոր երկրներն ու տարածաշրջանները հավասարաչափ ապահովված են բնական ռեսուրսներով:
4) Հողը յուրահատուկ ռեսուրս է, որը շատ դանդաղ է վերականգնվում:

35 **Ինքնաթիռը գտնվում է մի օդանավակայանում, որի աշխարհագրական կոորդինատներն են հյուսիսային լայնության 45° և արևմտյան երկայնության 80°: Որո՞նք կլինեն ինքնաթիռի կոորդինատները, եթե ինքնաթիռը 444 կմ գնա դեպի հյուսիս, 444 կմ դեպի արևելք, 444 կմ՝ հարավ և 444 կմ՝ արևմուտք:**

1) հվ. լ.45° և արմ.ե. 80°
2) հս. լ.45° և արմ.ե. 80°
3) հվ. լ.45° և արլ.ե. 80°
4) հս. լ.45° և արլ.ե. 80°

36 **Տրվածներից ո՞րը *չի* համարվում հակակարկտային միջոցառում ՀՀ-ում:**

1) հակակարկտային ցանցեր
2) գազագեներատորային
3) ջրահեռացում
4) ինքնաթիռային

37 **Տրվածներից ո՞րը քիմիական արդյունաբերության ենթաճյուղ *չէ:***

1) ազոտային պարարտանյութերի և ազոտական այլ միացությունների համալիր
2) գունավոր մետալուրգիայի արտադրական թափոնների օգտագործման համալիր
3) բնական գազի հիմքի վրա կառուցված սինթետիկ կաուչուկի և այլ քիմիական միացությունների արտադրական համալիր
4) սարքաշինության, ավտոմատացման միջոցների ու կառավարման համակարգերի արտադրական համալիր

38 **Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) մաս *չի* համարվում:**

1) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը
2) Հայկական հրաբխային բարձրավանդակը
3) միջլեռնային գոգավորությունները
4) Հայկական կամ Արևելյան Տավրոսը

39 **Թվարկված բնական աղետներից ո՞րը բնորոշ *չի* ՀՀ-ին:**

1) սելավները
2) սողանքները
3) ցունամիները
4) երկրաշարժերը

40 **Հողաբարելավման ո՞ր տեսակին են պատկանում լանջերի հերկումը լայնակի ուղղությամբ, ճմապատումը և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը:**

1) հակաէրոզիոն միջոցառումներ
2) քիմիական մելիորացում
3) արհեստական ոռոգում
4) ցամաքեցում

41 **Քարտեզ 2-ում ո՞ր տառով է նշված Ջավախքի լեռնաշղթան:**

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ

Քարտեզ 2

42 **Քարտեզ 2-ում ո՞ր տառով է նշված Վեղի գետը:**

1) Ե
2) Զ
3) Է
4) Ը

43 **Սպասարկման ոլորտի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Գոյություն ունեն ամենօրյա, դրվագային և պարբերական ծառայություններ:
2) Ինչքան մեծ է պահանջարկի հաճախականությունը, այնքան ծառայություններ մատուցող հաստատությունները պետք է մոտիկ լինեն բնակչությանը:
3) Այն հաստատությունները, որոնք գտնվում են տարբեր տարածքներում և չունեն փոխադարձ կապեր, առաջացնում են սպասարկման տարածքային համակարգ:
4) Հասարակության զարգացմանը համընթաց՝ ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի դերը բարձրանում է:

44 **Որոշակի իրավական ձևի շրջանակներում գործադիր իշխանության մարմինների նպատակաուղղված ներգործությունը կառավարվող սուբյեկտի վարքագծի վրա՝ շրջակա միջավայրի պահպանության եւ բնական ռեսուրսների ռոլջամիտ օգտագործման նպատակով, կոչվում է.**

1) բնապահպանական կառավարում
2) կայուն արտադրություն և սպառում
3) բնապահպանական մոնիթորինգ
4) գործարար կենսունակություն

45 **Տրվածներից ո՞րը կայուն գյուղատնտեսության կառուցվածքային բաղադրիչ *չէ:***

1) կենսատեխնոլոգիա և գենային ինժիներիա
2) գյուղատնտեսական թափոնների կառավարում
3) գյուղատնտեսական հողահանդակների քայքայումը
4) անվտանգ կերարտադրության կազմակերպումը

46 **Ըստ կիրառվող մշակության տեխնոլոգիաների ինտենսիվության բնույթի գյուղատնտեսության ուղղություններից *չէ*.**

1) էքստենսիվ գյուղատնտեսություն
2) պերմամշակություն
3) ինտենսիվ գյուղատնտեսություն
4) փայտամշակում

47 **Աշխարհագրական թաղանթի կենդանի բնության բաղադրիչ է.**

1) քարոլորտը
2) կենսոլորտը
3) մթնոլորտը
4) ջրոլորտը

48 **Այս բույսերն իրենց մեջ պարունակվող տարբեր նյութերի՝ եթերայուղեր, ալկալոիդներ, վիտամիններ և այլն, միջոցով մարդու օրգանիզմի վրա ունենում են հակաբորբոքային, ցավազրկող, քնաբեր, հանգստացնող և այլ բնույթի բուժիչ ազդեցություն: Դրանք են.**

1) պարենային բույսերը
2) դեղաբույսերը
3) տեխնիկական բույսերը
4) կերաբույսերը

49 **Կենսաբազմազանության վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է *սխալ:***

1) Հողագոյացման գործընթացը և հողի բերրիությունը հիմնականում պայմանավորված են կենդանիների (հատկապես՝ մրջյունների, որդերի, տերմիտների, տարբեր տեսակի բակտերիաների) գործունեությամբ:
2) Կենդանիներն ունեն ռելիեֆագոյացնող նշանակություն:
3) Նախնադարյան մարդու առաջին հիմնական զբաղմունքը գիտնականները համարում են ոռոգովի հողագործությունը:
4) Շատ երկրներում գյուղատնտեսական, կառուցապատման և այլ նպատակներով չորացնում են հսկայական տարածություններ զբաղեցնող ճահիճներ եւ ճահճակալած հողեր,որոնք շատ թռչունների բնադրման եւ ձմեռելու վայրեր են:

50 **Ինքնատիպ տարածաշրջանների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ինքնատիպ տարածաշրջանները ձևավորվում են բացառապես մեկ գործոնի ազդեցությամբ:
2) Ինքնատիպ երկրներից են տնտեսական սրընթաց աճ արձանագրած «նոր արդյունաբերական» պետությունները:
3) Նոր արդյունաբերական երկրների զարգացման հիմքը կազմում են էքստենսիվ գյուղատնտեսությունը և արդյունահանող արդյունաբերությունը:
4) Տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրների ժամանակակից տնտեսության ձեւավորման մեջ ամբողջովին բացառվել է օտարերկրյա ներդրումների բաժինը:

51 **Ստորև թվարկվածներից ո՞րը չի համարվում մարդկության համամոլորակային հիմնախնդիր:**

1) զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետեւանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը
2) տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը
3) մոլորակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը
4) հազարամյակի զարգացման նպատակները

52 **Որքա՞ն է Երկրի միջին շառավիղը:**

1) 6371 կմ
2) 6357 կմ
3) 6378 կմ
4) 6375 կմ

53 **Հողմնահարման ինչպիսի տեսակ գոյություն *չունի:***

1) քիմիական
2) ֆիզիկական
3) կենսաբանական
4) աշխարհագրական

54 **Փոքրաթեք լանջերի վրա հալչող գերխոնավ հողերի կամ գրունտների փոքր շերտերի համեմատաբար դանդաղ տեղաշարժը, որը կատարվում է ձգողական ուժերին գումարվող սառցածին երևույթների հետևանքով, կոչվում է.**

1) էրոզիա
2) սուբդուկցիա
3) կոնվեկցիա
4) սոլիֆլյուկցիա

55 **Տրվածներից ո՞րը չէ համարվում գետերի ջրհավաք ավազանի մուտքի բաղադրիչ:**

1) տրանսպիրացիան բույսերի միջոցով
2) մթնոլորտային տեղումները
3) արտահոսքը ստորգետնա ուղիներով
4) մակերևույթային հոսքերը

56 **Ընտրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագում ունեցող լեռները:**

1) Արևելապոնտական
2) Սավալան
3) Հայկական պար
4) Փամբակ
5) Բյուրակն
6) Հայկական Տավրոս
7) Ծաղկունյաց
8) Արագած

57 **Ընտրել այն բնակավայրերը, որոնք գտնվում են Տավուշի մարզում:**

1) Բերդ
2) Ճամբարակ
3) Իջևան
4) Ալավերդի
5) Դիլիջան
6) Թումանյան
7) Նոյեմբերյան
8) Վանաձոր

58 **Ընտրել ՀՀ այն մարզերը, որոնք սահման ունեն Ադրբեջանի հետ:**

1) Տավուշ
2) Լոռի
3) Արագածոտն
4) Կոտայք
5) Վայոց ձոր
6) Արմավիր
7) Արարատ
8) Շիրակ

59 **Ընտրել այն երկրների համարները, որոնք ապահովված են նավթի պաշարներով:**

1) Սաուդյան Արաբիա
2) Իրան
3) Գերմանիա
4) ՌԴ
5) Կանադա
6) Ճապոնիա
7) Իտալիա
8) Հայաստան

60 **Ընտրել այն երկրների համարները, որոնք համարվում են «նոր արդյունաբերական»:**

1) Սինգապուր
2) Սուդան
3) ՀԱՀ
4) Նորվեգիա
5) Մալայզիա
6) Հարավային Կորեա
7) ՌԴ
8) Կանադա

61 **Ընտրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի Միջերկրական ծով:**

1) Պորտուգալիա
2) Իսպանիա
3) Հունաստան
4) Մարոկկո
5) Չադ
6) Ռումինիա
7) Եթովպիա
8) Հորդանան

62 **Հրազդան գետի վրա կառուցված ջրէկ-ները գրել հարավից հյուսիս հաջորդականությամբ:**

1) Արգելի
2) Արզնու
3) Քանաքեռի

63 **Գրել տրված պետություններն ըստ տարածքի մեծության նվազող հաջորդականությամբ:**

1) Կանադա
2) Չինաստան
3) Ֆրանսիա

64 Գետի միջին լայնությունը 15մ է, միջին խորությունը 50 սմ, գետի ջրի արագությունը 50մ/վ: Հաշվել գետի ծախսը ($մ^3$/վ):

65 Երկրում երկաթի հետախուզված պաշարները 250մլն.տ. են, իսկ տարեկան հանույթը 5 մլն.տ.: Քանի՞ տարի կբավարարի երկաթի պաշարները, եթե հանույթի տարեկան արդյունահանման ծավալները չփոխվեն:

66 Հաշվել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սետեմբերի 23-ին Երևանում:

67 Օդի բացարձակ խոնավությունը 15գ/մ³ է, իսկ հագեցնելու համար անհրաժեշտ է 50 գ ջուր: Հաշվել հարաբերական խոնավությունը:

68 Ա քաղաքի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 50˚, արլ.ե. 15˚, իսկ Բ քաղաքի կոորդինատները՝ հս.լ. 45˚ և արմ.երկ 30˚: Որքան կլինի նրանց միջև գոտիական ժամանակների տարբերությունը:

69 **Մարդ բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք *սխալ:***

1) Բնությունը մարդուն շրջապատող, նրա գոյությունն ապահովող բնական տարրերի երևույթների ամբողջությունն է:
2) Էկոհամակարգի գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը:
3) Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ փոքրանում է մարդու ներգործությունը բնական միջավայրի վրա:
4) Քիմիական աղտոտման դեպքում տեղի է ունենում միջավայրի քիմիական հատկանիշների փոփոխություն:
5) Քիմիական ու մետաղաձուլական արդյունաբերությունը, վառելիքաէներգետիկան, ավտոմոբիլային տրանսպորտը, շինարարությունը, կենցաղային թափոնները համարվում են կենսաբանական աղտոտման աղբյուրներ:
6) Էկոլոգիական ճգնաժամի դեպքում խախտվում են նյութերի բնական շրջապտույտը, համակարգի կապերը, միջավայրը սկսում է քայքայվել, նախկին բնական լանդշաֆտներն իրենց տեղը զիջում են ավելի ցածր արդյունավետություն ունեցող մարդածին լանդշաֆտներին:

70 **ՀՀ-ի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք *սխալ:***

1) Տարածքի մեծությամբ ու բնակչության թվով փոքր երկիր է և զիջում է աշխարհի ավելի քան 130 պետությունների:
2) ՀՀ-ն գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային եւ Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) խաչմերուկում:
3) ՀՀ-ն տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ երկիր է:
4) Մոտ է գտնվում աշխարհի բարձր զարգացած երկրներին և հզոր տնտեսական կենտրոններին:
5) ՀՀ-ի ՏԱԴ-ը ժամանակի ընթացքում անփոփոխ է և նրա նպաստավոր հատկանիշերը մնայուն են:
6) Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման գոտում: